ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

Ա. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

Հիմնական դաստիարակչական աշխատանքներ

2022-2023ուստարի

№	Աշխատանքի բովանդակությունը	ժամկետը	Կատարող անձ
1.	Ստուգել աշակերտների հաճախելիությունը, նշել բացակայությունները	ուստարվա ընթացքում	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր
2.	Ստուգել պայուսակների, օրագրերի, դասագրքերի առկայությունը	Պարբերաբար	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր
3.	Հետևել աշակերտների սանրվածքին, հագուստներին, աշակերտին վայել ձևով դպրոց հաճախելուն	ուստարվա ընթացքում	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր դասղեկ
4.	Հետևել աշակերտների հերթապահությանը դպրոցում, ճաշարանում	ուստարվա ընթացքում	Փոխտնօրեն ԴԱԿ բուժքույր
5	Կազմակերպել շաբաթօրյակներ, բարեկարգման աշխատանքներ	ուշ գարնանը վաղ աշնանը	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր
6	Աշխատանք տանել դժվար դաստիարակվող աշակերտների հետ, կանխարգելել վարքի շեղումները	ուստարվա ընթացքում	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր
7	Աշխատանք տանել շատ «2» ստացող աշակերտների ծնողների հետ	Պարբերաբար	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր դասղեկ
8	Համագործակցել դպրոցի բուժքրոջ հետ աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակը ուսումնասիրելու նպատակով, նրա հետ միասին աշակերտների հետ անցկացնել զրույցներ, զարգացնել արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողությունների հմտություններ	ուստարվա ընթացքում	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր
9	Կազմակերպել երեխաների ֆիզիկական զարգացման, առողջության պահպանման և ակտիվ միջոցառումներ	ուստարվա ընթացքում	Փոխտնօրեններ ԴԱԿ բուժքույր

Հիմնական կազմակերպչական աշխատանքներ

2022-2023ուստարի

№	Աշխատանքի բովանդակությունը	ժամկետը	Կատարող անձ	Նշումներ
1	Դպրոցում ստեղծել աշակերտական խորհուրդ	20. 09	ԴԱԿ	Կատարված է
2.	Դպրոցում VI-XII դասարաններում ձևավորել աշակերտական խորհուրդ 10-օրյա ժամկետում դասարանական ժողովներից հետո ձևավորել դպրոցի աշակերտական ինքնավարության գործադիր մարմնի աշակերտական խորհուրդը փակ, գաղտնի քվեարկությամբ: Նշանակել և անցկացնել աշակերտական խորհուրդի ընդհանուր ժողով Հաստատել աշակերտական ինքնավարության մարմնի կանոնադրությունը Սահմանել աշակերտական խորհուրդի Թվակազմը Քննարկել աշակերտական խորհուրդի և նրա նախագահի հաշվետվությունը	03.09-13.09	ԴԱԿ ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱԿ	Կատարված է

Դպրոցի հիմնական խնդիրների լուծման ուղիները

Ստորև ըստ ուղղությունների ներկայացնում ենք դպրոցի հիմնական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

1. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը:

Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին
- բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին
- նպատակաուղղել երեխայի արժեքային համակարգի ձևավորումը
- զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը
- աշակերտների մոտ ձևավորել հարգելի վերաբերմունք լեզվի,
- մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ
- արժեքների կայուն կրողը
- յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին
- պահանջ:

Վերոհիշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր: Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառում է՝

- դպրոցի անձնակազմը
- դասարանական անձնակազմը
- աշակերտների ինքնավարությունը
- դպրոցի ավանդույթները

Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով

- ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացներում

- ապահովել, որպեսզի դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա

Աշակերտական ինքնավարության բարելավումը

Աշակերտական ինքնավարությունը 2011թ. մայիսի 17-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 571-Ն հրամանով հաստատված աշակերտական խորհրդի կանոնների համաձայն ենթադրում է՝

- յուրաքանչյուր աշակերտի կողմից իր ուրույն տեղի ու դերի որոնում՝ հիմնվելով իր ընդունակությունների և հնարավորությունների վրա
- սովորողների ընդգրկում դպրոցի կառավարման գործընթացներում
- աշխատունակ կոլեկտիվի ստեղծում
- աշակերտների միջև ընկերական փոխհարաբերությունների ձևավորում
- յուրաքանչյուր աշակերտի կողմից սեփական կյանքի և գործունեության հնարավորինս ճիշտ կազմակերպում
- ինքնավարության համակարգի որպես դպրոցի դաստիարակչական միջավայրի ստեղծում
- աշակերտին հասարակական հարաբերություններում ընդգրկելու համար խմբային և անհատական գործունեության կազմակերպում
- միջտարիքային շփման և սոցիալական հարմարվողականության հիմք հանդիսացող մանկական կազմակերպության զարգացում և ամրապնդում
- երեխաների իրավունքների և հետաքրքրությունների պաշտպանության համար անհրաժեշտ նախապայմանների ապահովում

Աշակերտական ինքնավարության իմաստը կայանում է ոչ թե երեխայի կամ մի խումբ երեխաների կողմից մյուսների հանդեպ իշխանության չարաշահման մեջ, այլ երեխաների կողմից սեփական անձը, կյանքը, գործունեությունը, հարաբերությունները հասարակության մեջ կառավարելու ընդունակությունների ձեռքբերման մեջ:

Դպրոցում աշակերտական ինքնավարության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է՝

- ստեղծել մանկավարժական, աշակերտական և ծնողական ինքնավարության օղակներ
- դպրոցում մշտապես վերահսկել աշակերտական ինքնավարության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները
- ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ
- ոգևորելև խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, գիտագործնական խորհրդատվությունը, համատեղ ստեղծագործական գործունեությունը
- ըստ անհրաժեշտության «Ծնողական համալսարանում» ծնողների համար անցկացնել անհատական և խմբային խորհրդատվություն
- դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին

- ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:
- դպրոցի ինքնավարության օղակների միջև կատարել լիազորությունների հստակ բաշխում և ապահովել վերջիններիս միջև սերտ համագործակցությունը
- այս ուղղությամբ ևս ապահովել սկզբունքների հրապարակայնություն և թափանցիկություն
- ստեղծել բավարար պայմաններ և հնարավորություն ընձեռել դպրոցի աշակերտների կողմից առողջ քննադատություն հնչեցնելու և կարծիքների ազատ փոխանակում իրականացնելու համար

Աշակերտներին ակտիվորեն ներգրավել

- դպրոցում կարգուկանոնի պահպանման գործընթացում
- դպրոցական և ռազմահայրենասիրական միջոցառուների կազմակերպմանը
- առարկայական շաբաթների կազմակերպմանը

դպրոցում պարբերաբար կազմակերպել՝

- արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ (տոնական միջոցառուներ, ցերեկույթներ, էքսկուրսիաներ և այլն)
- դպրոցական հերթապահություններ
- ճանաչված անձանց հետ հանդիպումներ
- դպրոցում մշտապես օգնություն, խնամք և աջակցություն տրամագրել կրտսեր ընկերներին
- այս ուղղությամբ պարբերաբար ծավալվել դպրոցական լրատվական միջոցառումներ
- դպրոցի աշակերտական խորհուդը դարձնել պատանի առաջնորդների հավաքակազմ

Առաջարկվող միջոցառուների արդյուքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- կհամախմբվի աշակերտական համակազմը
- կձևավորվեն և կպահպանվեն նոր ավանդույթներ
- աշակերտները ձեռք կբերեն կյանքի հմտություններ

- կբարձրանա միջոցառումներին մասնակցելու աշակերտների ցանկությունն ու պատրաստակամությունը
- անհատի ինքնաբացահայտման և ինքնակայացման համար կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ
- վերջնահաշվում՝ աշակերտի կյանքում կբարձրանա դպրոցի դերը:

ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ստորև ըստ ուղղությունների ներկայացնում ենք դպրոցի հիմնական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

1. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը:
Դաստիրակչական համակարգի նպատակն է՝

Օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին,

- Բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին,
- Նպատակաուղղել երեխայի արժեքային համակարգի ձևավորումը,
- Զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,
- աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային
ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը,
- յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ

- Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր, որը ներառում է

- Դպրոցի անձնակազմը
- Դասարանական անձնակազմը
- Աշակերտների ինքնավարությունը
- Դպրոցի ավանդույթները

Մեր կարծիքով դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է

- Դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և
  - կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով:

- Ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացներում
- Ապահովել, որպեսզի դաստիարակչական գործընթացը հիմնվի հստակ նախագծված դասղեկական պլանների վրա

ԸՆՏԱՆԻՔ- ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Դաստիարակությունը հաջողությամբ է ընթանում եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում է միաժամանակ: այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

- Էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը.
- Բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը
- Բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը
- Ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ
- Նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է.

- Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,
- Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,
- Դպրոցի կառավարման գործընթացներին ծնողների մասնակցության մեծացում:

Հանձնարարել դասղեկներին , որպեսզի վերջիններս անվերապահորեն ծանոթ լինեն աշակերտների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը և տեղեկացված լինեն այն սովորողների

մասին, որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են կամ ընտանիքները սոցիալապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ

- Կատարելագործել ծնողների հետ աշխատանքիավանդական դարձած մեխանիզմները և
  պարբերաբար կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ

- Ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը,
- Ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը:
- Ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել
  միջոցառումներ,
- Ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած Ծնողներին անհատական նախաձեռնությունները, գիտագործնական խորհրդատվությունը, համատեղ ստեղծագործական գործունեությունը,

- Ըստ անհրաժեշտության «Ծնողական համալսարանում» ծնողների համար անցկացնել անհատական և խմբային խորհրդատվություններ.
- Դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին
- Ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Անցկացնել դպրոցի բոլոր աշակերտների դիտարկում, ճանաչել երեխայի, գտնել ուժեղ կողմերը, ակտիվացման ուղիները և հատուկ կարիքները, որը հնարավորություն կտա օգնել երեխային՝ընդգրկելու աշակերտական կոլեկտիվ

Ուսումնասիրել

Երեխայի մտավոր զարգացման մակարդակին կրթական ծրագրի համապատասխանությունը

Երեխայի հարաբերությունները այլ երեխայի հետ

Երեխայի ծնողի հարաբերությունները այլ երեխայի ծնողների հետ

Ծնողի հարաբերությունները մանկավարժների հետ

Ներառականում ընդգրկված յուրաքանչյուր աշակերտի համար լրացնել դիտարկման քարտ, սոցիալական կարիքների գնահատման թերթիկ և անհատական ուսուցման պլան:

Անցկացնել դիտումներ ինչպես առարկայական (Կյանքի հմտություն, Մաթեմատիկա), այնպես էլ շտկողական պարապմունքների և դասապատրաստման ժամանակ:

ԿԱՊԿՈՒ աշակերտների ցուցակի ամրագրում

1 ԿԱՊԿՈՒ աշակերտների ընդգրկում արտադասարանային դասընթացներին՝ երաժշտություն, թատերական, ֆիզիկական պատրաստվածություն

2. Հետևել, որ խտրականություն չդրսևորվի թե՛ դասերի ժամանակ, թե՛ դասերից դուրս

3. Դպրոցի աշխատակազմի հետ հետևել, որ «առուտիկ, ներառական» և նմանատիպ եզրույթներով չպիտակավորվեն աշակերտները:

4. Ապահովել երեխաներին հավասարապես արժևորելու մոտեցումը:

5. Անցկացնել զրույցներ, անհատական և խմբային աշխատանքներ, աշակերտների զարգացմանը նպաստող խաղեր, խաղային վարժություններ օրվա ռեժիմում, աշխատանքային և ուսումնական գործունեության ընթացքում:

6. Անցկացնել տեսողական ընկալման՝ նկարչական, գրելու, հաշվողական, կառուցողական, շարժումն ընդօրինակելու և պատկերն համադրելու կարողության ստուգման թեստեր:

7. Աշխատանքում օգտագործել համակարգչային և դիտակտիկ խաղեր, կինո ու տեսաֆիլմերի դիտում, վարժություններ, դասընթացներ:

8. Տարեվերջում կատարել անցկացված աշխատանքների և կրթության արդյունավետության գնահատում:

Գեղագիտական դաստիարակություն

մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ	Պարբերաբար '	
2.	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու դասասենյակները, կազմակերպել օլիմպիադաներ, հաշվետու համերգներ:	ՄԿԱ գծով փոխտնօրեն ԴԱԿ	Սեպտեմբեր	
3.	Ուսուցչի օրվան նվիրված միջոցառում:	ԴԱԿ ԱԽ	Հոկտեմբեր	

4.	Թարգմանչաց տոն	ԴԱԿ, Հայոց լեզվի և պատմության մասնախմբեր	Հոկտեմբեր	
5.	Այցելություններ գրողների տուն թանգարան:	ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ	Նոյեմբեր	
6.	Ամանորյա միջոցառումներ, դիմակահանդեսներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ, դասղեկներ, դասվարներ	Դեկտեմբեր	
7.	Ազգային ավանդույթներ և տոներ	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, ԴԱԿ, պատմության ուսուցիչներ, եզդերենի ու	Փետրվար	

8.	Հանդիպում արվեստի բնագավառի աշխատողների հետ:	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, ԴԱԿ,երգ-երաժշտության ուսուցիչ	Մարտ	
9.	Երգի և աստունքի մրցույթ՝ նվիրված գարնանը և մարտի 8-ին	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, ԴԱԿ,երգ-երաժշտության ուսուցիչ	Մայիս	
10.	Բնության զարթոնքին նվիրված միջոցառումներ	ՄԿԱ. գծով փոխտնօրեն, ԴԱԿ,դասվար, դասղեկներ	Ընթացքում	

Ուսումնադաստիարակչական

աշխատանքների կազմակերպչական բաժին

N	Աշխատանքի բովանդակությունը	**Պատասխանատու**	**Ժամկետ**	**Նշումներ**
1.	Կազմակերպել 6 տարեկան երեխաների մուտքը դպրոց	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասվարներ ԴԱԿ	Սեպտեմբեր	
2.	Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով	ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ	Սեպտեմբեր	
3.	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգի բացակայությունների նկատմամբ , ժամանակին կանխել դրանք, առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ	Ուստարվա ընթացքում	

4.	Աշխատանք տանել 5-12-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	ՄԿԱ գծով փոխտնօրեն , դասղեկներ ԴԱԿ	Ուստարվա ընթացքում	

Քաղաքացիական , բարոյական դաստիարակություն

Քաղաքացիական ակտիվ դիրքորոշման, պատասխանատվության , արժանապատվության ձևավորման. հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ:

N	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Ուսուցչի օրվան նվիրված դասարանական զրույցներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ, դասղեկներ	հոկտեմբեր	
2.	Էքսկուրսիաներ, այցելություն պատմա-մշակութային հուշարձաններ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ	Պարբերաբար	
3.	Բանակի օրվան նվիրված միջոցառումներ	ՄԿԱ գծով փոխտնօրեն, զինղեկ, ԴԱԿ	Հունվար	

4.	Ղարաբաղյան շարժում, ազատագրական պայքար(զեկուցումներ, զրույցներ, ընթերցումներ):	Պատմության մասնախումբ Եկեղեցու պատմության ուսուցիչներ	Փետրվար	
5.	Սուրբ Սարգսի տոն	ԴԱԿ, դասվարներ դասղեկներ	Փետրվար	
6.	Կանանց միամսյակին նվիրված օրեր:	ԴԱԿ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Մարտ	
7.	Մեծ Եղեռնի հիշատակմանը նվիրված միջոցառումներ, բաց դասեր:	ԴԱԿ, դասղեկներ	Ապրիլ	

8.	Աշխատանքի կարևորման օր, աշխատանք դպրոցամերձ տարածքում:	Տնօրինություն, համայնքապետարան, տեխնոլոգիայի ուսուցիչներ	Մայիս	
9.	Շուշիի ազատագրման օրը.(այցելություն զոհված ազատամարտիկների շիրիմներին, զեկուցումներ, բաց դասեր, ներդասարանական միջոցառումներ):	ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ, երգ-երաժշտության ուսուցիչ	Մայիս	
10.	Մեծ Հայրենականի հաղթանակի օրը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, դասղեկներ, ԴԱԿ	Մայիս	
11.	Անցկացնել <<Վերջին դաս>> միջոցառումը:	ՄԿԱ գծով փոխտնօրեն, Դասղեկներ, ԴԱԿ	Մայիս	